ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 187-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի բնակիչ Գրիշա Քաջիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Գոմք բնակավայրի 2-րդ փողոց, 12 հասցեում գտնվող 0.09336 հա մակերեսով, 10-019-0009-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026ZWRUVQ).

- Վայք համայնք, գ. Գոմք, 2-րդ փողոց, 12/1 հողամաս, մակերեսը՝ 0.03785 հա,

- Վայք համայնք, գ. Գոմք, 2-րդ փողոց, 12 բնակելի տուն, մակերեսը՝ 0.05551 հա,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 13
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահուլյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 188-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՏՈՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,128 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Ա-52, 10.07.2026թ).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի բնակիչ Անտոն Ավագի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող, Սարավան բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,128 հա մակերեսով, 10-039-0101-0017 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, գ.Սարավան, Երևան-Մեղրի մայրուղի, 5/3 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (վկայական՝ 1198344):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 13
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 189-Ա**

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀԱՆ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 17.03.2005 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-դ հոդվածի 1-ին մասի, Վայքի քաղաքապետարանի և Վահան Արամի Հարությունյանի միջև 2005 թվականի մարտի 17-ին կնքված՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրի, հաշվի առնելով վարձակալ, Վահան Հարությունյանի դիմումը (մտից N Հ-52, 14.07.2026թ.).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Սույն թվականի հուլիսի 15-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Վայքի քաղաքապետարանի և քաղաքացի՝ Վահան Արամի Հարությունյանի միջև 2005 թվականի մարտի 17-ին կնքված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը 18.0 քմ մակերեսով հողամասի մասով (վկայական՝ N 0056842):
2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 14
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 190-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00704 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00704 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0036-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Մեսրոպ Գերասիմի Մեսրոպյանի կողմից ինքնակամ կառուցված 62,32 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 61/6 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026EX2CPP):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 14
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 1Է, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 191-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ՊԵՏԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով շինության սեփականատիրոջ կողմից լիազորված անձ Արմինե Ավետիսյանի դիմումը (մտից N- Ա-42, 16.06.2026թ).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ, Գարիկ Պետիկի Հովսեփյանի (ծնված՝ 12.03.1970թ) ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող Վայք համայնք, ք. Վայք, Ս.Շահումյան փողոց, 1/12 հասցեում գտնվող 0.04116 հա մակերեսով, 10-003-0008-0025 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 1Է, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 192-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 6/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.«Լիդեր կոմպլեքս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 6/2 հասցեում գտնվող 0.81789 հա մակերեսով, 10-003-0004-0419 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորին տրամադրել հետևյալ հասցեն.

- Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի, 6/4 սպասարկման օբյեկտ, մակերեսը՝ 0.26957 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026MRERBR),

- Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի, 6/2 սպասարկման օբյեկտ, մակերեսը՝ 0.54332 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026K7KMV9),
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 193-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 12-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող օրինական կառույցի օտարման վերաբերյալ» թիվ 167-Ա որոշման բովանդակության 1-ին կետում նշված «Արտաշես Սահակի Հովհաննիսյանի ժառանգ հանդիսացող» բառերը փոխարինել «Արտաշես Սահակի Հովհաննիսյանի որդի հանդիսացող» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 1Է, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 194-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Սանասար Սիմոնի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան փողոց 3 հասցեում գտնվող 0.0700 հա մակերեսով, 10-003-0019-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորին տրամադրել հետևյալ հասցեն.

- Վայք համայնք, քաղաք Վայք, Ալավերդյան փողոց, 3/1 հողամաս, մակերեսը՝ 0.01 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20268Y9YUH),

- Վայք համայնք, քաղաք Վայք, Ալավերդյան փողոց, 3 բնակելի տուն, մակերեսը՝ 0.06 հա, (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026WQKAE7),
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 195-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրի բնակիչ Տավրոս Հրանտի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրի 7-րդ փողոց, 6 հասցեում գտնվող 0.50971 հա մակերեսով, 10-026-0003-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026AKCMES).

- Վայք համայնք, գ. Խնձորուտ, 7-րդ փողոց, 6/1 հողամաս, մակերեսը՝ 0.05567 հա,

- Վայք համայնք, գ. Խնձորուտ, 7-րդ փողոց, 6 բնակելի տուն, մակերեսը՝ 0.45404 հա,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 196-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 55 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի բնակիչ Տարոն Ստյոպայի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Գոմք բնակավայրի 5-րդ փողոց, 55 բնակելի տուն հասցեում գտնվող 0.5199 հա մակերեսով, 10-019-0025-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագրեր՝ 2026WSDTDZ, 2026AYL2LA).

- Վայք համայնք, գ. Գոմք, 5-րդ փողոց, 55/1 հողամաս, մակերեսը՝ 0.048241 հա,

- Վայք համայնք, գ. Գոմք, 5-րդ փողոց, 55 բնակելի տուն, մակերեսը՝ 0.471669 հա,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 15
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 1Է, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 197-Ա**

ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետերով և Վայք համայնքի բնակիչ Լևոն Միքայելի Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 14-ի N Վ-5 դիմում).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց 97/2 հասցեում գտնվող, քաղաքացի Լևոն Միքայելի Վարդանյանի սեփականությունը հանդիսացող 10-003-0024-0096 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 9,2 քմ արտաքին մակերեսով շինությունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,0075 հա, համարել օրինական (վկայական՝ 09102017-10-0019, գաղտնաբառ՝ TGJWKJTA9GEN):
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 9.2 քմ մակերեսով կառույցը սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցներն իրականացրած անձ Լևոն Միքայելի Վարդանյանի N շինության համար վճարել 26 165/ 9,2 x 2844/ (քսանվեց հազար մեկ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 16
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 198-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 - Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու և 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 32/47 բենզալցակայան հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 214,47 քմ արտաքին մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,035 հա մակերես հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղաքացի Հրայր Վազգենի Թորոսյանին ՝ շինության համար վճարելով **2 744 787** /214,47 x 12798/ (երկու միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, հողատարածքի համար՝ **657 195** /350x1877,7/(վեց հարյուր հիսունյոթ հազար մեկ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ:
2.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Հրայր Վազգենի Թորոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 16
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 199-Ա**

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ, ՍՈՒՅՆ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՑ 17-Ը ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.05.2026 թվականի N 29-Լ հրամանով և հիմք ընդունելով էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հաստատել Վայքի համայնքապետարանի կողմից հայտարարված, սույն թվականի հուլիսի 14-ից 17-ը կայացած հողամասերի օտարման էլեկտրոնային աճուրդների արդյունքները՝

1.1 Հասարակական կառուցապատման նպատակով Վայք համայնքի Վայք քաղաքի Ս. Շահումյան փողոց, 99/10 հասցեում գտնվող 10-003-0024-0378 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 0,00582 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 5242870 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը 630 000 (վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Լուսինե Սամվելի Ղազարյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.2 Արևային Տոտովոլտային կայան կառուցելու նպատակով Վայք համայնքի Սարավան բնակավայրի Ե հասցեում գտնվող 10-039-0329-0026 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 12,3 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 3128589 լոտով աճուրդի հանված էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների

օբյեկտներ նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի՝ հողամասը 43 050 000 (քառասուներեք միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Վարուժան Գենադիի Մարտիրոսյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.3 Հասարակական կառուցապատման նպատակով Վայք համայնքի Արտավան բնակավայրի2-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող 10-011-0006-0010 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 0,00378 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աժուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 2091365 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը 105 000 (մեկ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Վահրամ Հենրիկի Մարտիրոսյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.4 Բնակելի կառուցապատման նպատակով Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 7-րդ փողոց, 13/1 հասցեում գտնվող 10-022-0070-0044 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 0,0 16 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աժուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 9645872 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 69 500 (վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Հարություն Մանվելի Գրիգորյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.5 Բնակելի կառուցապատման նպատակով Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 5-րդ փողոց, 47 հասցեում գտնվող 10-033-0010-0040 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 0,08 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աժուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 6623406 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 347 000 (երեք հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Ռաֆայել Թորգոմի Իսրայելյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.6 Բնակելի կառուցապատման նպատակով Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց, 10/1 հասցեում գտնվող 10-019-0033-0002 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 0,03 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աժուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 1465584 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 306 000 (երեք հարյուր վեց հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Գեղամ Կամոյի Գրիգորյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

1.7 Բնակելի կառուցապատման նպատակով Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց, 2/10 հասցեում գտնվող 10-019-0327-0069 կադաստրային ծածկագրով հողամասի,

մակերեսը՝ 0,11027 հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աժուրդի արդյունքների մասին 17.07.2026 թվականի արձանագրությունը, N 8468244 լոտով աճուրդի հանված բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 812 000 (ութ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամով վաճառել աճուրդի մասնակից, գնորդ Վարդուշ Հովսեփի Հովսեփյանին և նրա հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (հողասի գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից):

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 21
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 200-Ա**

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ՝ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.05.2026 թվականի N 29-Լ հրամանով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Համարել չկայացած Վայքի համայնքապետարանի կողմից հայտարարված, սույն թվականի հուլիսի 14-ից 17-ը կայացած հողամասերի օտարման էլեկտրոնային աճուրդը՝ լոտ 3951545, Սերս բնակավայր, 6-րդ փողոց, 14/1 հասցե, 10-040-0024-0015 կադաստրային ծածկագրով, 0.01325 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն օտարելու համար հայտարարված էլեկտրոնային աճուրդը, քանի որ հաղթող մասնակիցը հրաժարվեց հողամասի արժեքի երկրորդ մասը վճարել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 21
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 201-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի 2026 թվականի փետրվարի 9-ի «Գասպար Բալաբեկի Գասպարյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող Վայք քաղաքում գտնվող բնակելի տան, օժանդակ շինությունների, տնամերձ հողամասի և դրան կից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 21-Ա որոշման բովանդակության 2-րդ կետում նշված «Ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված» բառերից հետո լրացնել «0.0350 հա մակերեսով» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 22
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 1Է, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի **N 202-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00217 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00217 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0024-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Լևոն Միքայելի Վարդանյանի կողմից ինքնակամ կառուցված 21,7 քմ արտաքին մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ս. Շահումյան փողոց, 97/3 առևտրի սրահ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026UL5CGR):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 22
ք. Վայք